Թաիլանդի Թագավորություն

Հայկ Աղլամազյան, Միջին դպրոց. 8-2 դասարան

Աշխարհագրություն

Թաիլանդը գտնվում է Հարավ-Արևելյան Ասիայում: Երկրի հյուսիսը և արևմուտքը լեռնային է (ամենաբարձր գագաթը Ինխտանոն է՝ 2576 մ), արևմուտքում է գտնվում լայնարձակ ավազաքար սարահարթ Կորատը, երկրի կետնրոնական հատվածը զբաղեցնում են լայնարձակ Մենամական ցածրադիր վայրերը, իսկ երկրի հարավային մասը զբաղեցնում են ցածր դաշտավայրերը՝ կղզիների վրա գտնվող լեռներով և բլրաշարքով: Երկրի տարածքը (կղզիների հետ միասին) կազմում է 517 ք. կմ:

Մայրաքաղաքը՝ Բանգկոկ:

Բնակչությունը

Բնակչությունը 70 միլիոն և ավել է: Հիմնական մասը կազմում են թաիլանադական ժողովուրդները (ավելի քան 15 էթնիկ խմբեր՝ կխոն-տայի, լաո, տայի-կորատ և այլն), նաև մալայացիները, չինացիները, կխմերները, տիբետ-բիրմանական խմբերը, մաո և յաո ցեղախմբերը:
Թաիլանդում հայերի մասին առաջին հիշատակումները վերաբերում են XVII դարին: Ներկայումս այնտեղ բնակվում է 40-50 հայ, հիմնականում՝ Բանգկոկում: Նրանք շինարարներ են, ոսկերիչներ և տեքստիլ արդյունաբերության աշխատողներ:



Տրանսպորտ

Բանգկոկը մարզերի հետ կապվում է ավտոմայրուղիների ճյուղավորված ցանցով: Պետական տրանսպորտային ընկերության ավտոբուսները աշխատում են ըստ կարգացուցակի, տոմսերը թանկ չեն և լինում են 3 կարգի: Ավտոբուսները երկրի քաղաքային տրանսպորտի հիմքն են: Երթուղիներում աշխատում են նաև մեքենաներ օդափոխիչի (երթևեկությունը ավելի թանկ է) և առանց օդափոխիչի: Կան նաև ճեպընթաց երթուղային տաքսիներ: Աշխատում են նաև գիշերային ավտոբուսներ առանց օդափոխիչի: Տոմսերը ավտոբուսում վաճառվում են վարորդը կամ տոմսավաճառը:

Մշակույթ և տեսարժան վայրեր

Զբոսաշրջիկների հաճախելիության ցուցանիշով Թաիլանդը հարավարևելյան Ասիայի երկրներից առաջատարն է: Միլիոնավոր այցելուների ուշադրությունը գրավում են հազարավոր բուդդայական տաճարները և վանքերը, հիանալի պալատները և սրբատեղիները Բանգկոկում, Պատտայի, Սամույի և Փհուկետի հիանալի լողափները, աշխույժ գիշերային կյանքը իր զանազան շոուներով, զվարճանքներով, հայտնի թաիլանդական մերսումը և մարտական արվեստը, փղերով զբոսանքը, դայվինգի համար հիանալի պայմանները, յուրահատուկ «լողացող» շուկաները և Անդամյան ծովում հարյուրավոր էկզոտիկ անմարդաբնակ կղզիները, թաիլանդական խոհանոցի հայտնի ուտեստները և գեղեցիկ բուդդայական տոնակատարությունները:

Դրոշը

Զինանշանը

Թաիլանդի տեսարժան վայրերը

Փիմայ

Փուփիրաբատ պատմական պարկ

«Կենգ Կրաչան ազգային պարկ» անտառային համալիր

Վատ Փիրա Մահատհատ Նկահոնսիտհամմարատում

Չյանգմայի հուշարձաններ և մշակութային լանդշաֆտ

Տհատ Փանոմ տաճարային համալիր և նրա հետ կապված պատմական շինություններ և լանդշաֆտ